Հաստատված է
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի
գիտական խորհրդի 2017 թվականի
հունվարի 31-ի N 1-01/17/2,
2025թ. փետրվարի 26- N1-02/25/1 որոշումներով:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ն.Ա.Միքայելյան

ԿԱՐԳ
ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. Սույնով կանոնակարգվում է Շուշիի տեխնոլոգիական համալսարանում (այսուհետև՝ Համալսարան) կոռուպցիոն ռիսկերի վերլուծության և նվազեցման միջոցառումների մշակման հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) գործունեությունը, որը նպատակաուղղված է համալսարանական կրթության ոլորտում թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության, օրինականության ապահովմանը և կոռուպցիոն ռիսկերի կանխարգելմանը:

2. Համալսարանի զարգացման ռազմավարության կարևորագույն խնդիրներից է կոռուպցիոն ռիսկերի կանխարգելումը, ինչի արդյունավետությունը բարձրացնելու համար Հանձնաժողովը նպաստում է համալսարանում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի հետագա զարգացմանը, կրթության որակի բարձրացմանը, հանրային կապի ամրապնդմանը, կադրային քաղաքականությանը, տեղեկատվական ռեսուրսների զարգացմանը, կառավարման արդյունավետության բարձրացմանը, ուսանողական ինքնավարության ապահովմանը և այլն:

3. Հանձնաժողովը մշակում և գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում Համալսարանում հնարավոր կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագիրը (2025-2028 թթ.)», որը Համալսարանում կոռուպցիոն հնարավոր երևույթների դեմ արդյունավետ պայքարի հիմնական ուղենիշն է(**Փոփ. կատ. են 26.02.2025թ., N1-02/25/1**): Ծրագրում արտացոլվում են համալսարանական միջավայրում գոյություն ունեցող կոռուպցիոն դրսևորումների դեմ նպատակային պայքարի հիմնական միջոցառումները, դրանց իրականացման արդյունքում ակնկալվող ուղղակի արդյունքները, սահմանվում են պատասխանատուների և գործողությունների իրականացման ժամկետները: Ծրագիրը պահանջում է հակակոռուպցիոն գործիքակազմի ճշգրիտ ընտրություն, արդյունավետ ու համապարփակ միջոցառումների համալիր իրականացում՝ հնարավորինս ապահովելով հստակ, գնահատելի և իրատեսական արդյունքներ:

4. Համալսարանականների շրջանում կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողական մթնոլորտ ձևավորելու նպատակով Հանձնաժողովն իրականացնում է միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են վերացնելու առկա խնդիրների հանդեպ անտարբերությունը և հակակոռուպցիոն պայքարում խթանելու ուսանողների ու դասախոսների ակտիվությունը: Հատկապես կարևոր են ուսանողների մասնակցությունն ակտիվացնելու նպատակով մշտապես իրականացվող միջոցառումները, որոնք կոչված են բարձրացնելու հակակոռուպցիոն գործընթացի արդյունավետությունը:

5. Ուսանողների հետ համալսարանի ղեկավար կազմի՝ ռեկտորի, պրոռեկտորների և դեկանների հանդիպումների, գիտական խորհրդի և ռեկտորատի նիստերի և մի շարք այլ միջոցառումների ժամանակ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողականության ձևավորմանը: Կոռուպցիոն երևույթների վերաբերյալ հրապարակումները ամբիոնների միջոցով հասցվում է

պրոֆեսորադասախոսական, իսկ կուրսղեկների միջոցով՝ ուսանողական կազմերին, պատրաստվում են քարոզչական և տեղեկատվական պաստառներ:

6. Հանձնաժողովի ներկայացուցիչները մասնակցում են հայաստանյան և միջազգային տարբեր կազմակերպությունների հրավիրած հակակոռուպցիոն սեմինար-քննարկումներին, ներկայացնում «Շուշիի տեխնոլոգիական համալսարանում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի (2025-2028 թթ.)» դրույթները, կատարված աշխատանքները(**Փոփ. կատ. են 26.02.2025թ., N1-02/25/1**):

7. Հանձնաժողովը նպաստում է Համալսարանի կրթությունը կանոնակարգող իրավական ակտերի փոփոխությունների և լրացումների գործընթացին, կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերում, ինչպես նաև բակալավրիատում և մագիստրատուրայում գիտելիքների ստուգման և գնահատման համակարգերում կատարվող փոփոխությունների մշակման, կրթական ծառայությունների մատչելիությունը և բարձր որակ ապահովելու նպատակով կրթական գործընթացի կանոնակարգման աշխատանքներին:

8. Համալսարանի ստորաբաժանումներում Հանձնաժողովը կատարում է ներքին իրավական ակտերի կիրառման արդյունավետության և բացահայտված թերությունների շտկման մշտադիտարկում:

9. Հանձնաժողովն աջակցում է կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցի և դասընթացների տեղեկագրի մշակմանն ու հրատարակմանը, 1-ին կուրսի բոլոր ուսանողներին էլեկտրոնային կրիչով տրամադրմանը, միաժամանակ համացանցային կայքէջում տեղադրմանը:

10. Հանձնաժողովը նպաստում է հակակոռուպցիոն ծրագրի կարևոր խնդիրներից համարվող կրթական ծառայությունների որակի ու մատչելիության ապահովմանը, Համալսարանի որակի ապահովման կենտրոնի ստեղծմանն ու գործունեությանը:

11. Հանձնաժողովն աջակցում է էլեկտրոնային միջոցներով գրականությունից օգտվելու հնարավորությունների ընդլայնմանը, գրադարանի համար արագ սկանավորող (թվայնացման) սարքերի ներդրմանը, դրանց միջոցով դասագրքերի էլեկտրոնային տարբերակների մշակմանը, գրադարանի էլեկտրոնային ռեսուրսների ընդլայնմանը, ամսագրերի էլեկտրոնային բաժանորդագրությանը, նոր գրքերի ձեռքբերմանը:

12. Հակակոռուպցիոն աշխատանքներում Հանձնաժողովը մեծ նշանակություն է տալիս ուսանող-դասախոս երկկողմ պատշաճ շփումների մշակույթի ձևավորմանը (էլեկտրոնային գործիքների միջոցով աշխատանք՝ ինքնուրույն աշխատանքի հանձնարարությունների և ուսումնական լրացուցիչ նյութերի առաքում և ստացում, գնահատման արդյունքների մասին իրազեկում և այլն): Նպաստում է այս նպատակով էլփոստի նոր սերվերային համակարգի ստեղծմանը, որը կապահովի պրոֆեսորադասախոսական կազմի բոլոր ներկայացուցիչներին էլեկտրոնային փոստի հասցեների տրամադրման հնարավորություն: Խթանում է նաև ուսանողներին և հետագա տարիների շրջանավարտներին նույնպես համալսարանական էլփոստի հասցեների տրամադրման ուղղությամբ տարվող աշխատանքները, համապատասխան հզորությամբ սերվերի ձեռքբերմանը, էլփոստի հասցեների պիլոտային փորձարկմանը, ինչպես նաև համակարգի ամբողջովին գործարկմանը:

13. Հանձնաժողովն աջակցում է քննական գործընթացի թափանցիկության ապահովմանը, մշտադիտարկում է իրականացնում քննական գործընթացների, այդ թվում՝ դրանց արդյունքները Համալսարանի համացանցային կայքէջում, ֆակուլտետների հայտարարությունների տախտակների վրա հրապարակման և այդ արդյունքների վերլուծության ընթացքի նկատմամբ:

14. Մասնակցում է ուսանողների ուսումնառության արդյունքների օբյեկտիվ գնահատման, ներառյալ վերանայման և բողոքարկման մեխանիզմների չափանիշների մշակմանը, ինչպես նաև կանոնակարգերի և ընթացակարգերի հետևողական կիրառմանը,

դրանց վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, ուսումնական գործընթացի վերահսկելիության ապահովմանը, հետևում է համապատասխան տեղեկատվական համակարգի միջոցով քննական ամփոփագրերի սկանավորմանը և դրանց հետագա փոփոխություններն ու այլ միջամտությունները բացառող կենտրոնացված բազայում պահպանմանը, քննությունների արդյունքները և ուսանողների ՄՈԳ-երը յուրաքանչյուր քննաշրջանից հետո ֆակուլտետներում հրապարակմանը և ֆակուլտետային ենթակայքերում տեղադրմանը:

15. Հանձնաժողովն աջակցում է ավարտական քննությունների անցկացման և ավարտական աշխատանքների պաշտպանության թափանցիկության ապահովմանը, հնարավորության դեպքում՝ ուղիղ հեռարձակմանը:

16. Հանձնաժողովը նպաստում է ասպիրանտուրայի տեղերի բաշխման մեխանիզմների կատարելագործմանը, ամբիոններում ու ֆակուլտետային գիտխորհուրդներում ասպիրանտուրայի տեղերի հատկացման հայտերի քննարկմանը, ասպիրանտուրայի ընդունելության քննությունների անցկացման արդյունավետ մեխանիզմների մշակմանը և ներդրմանը:

17. Հանձնաժողովը մասնակցում է դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների իրականացման գործընթացի կանոնակարգմանը, որի հիման վրա ուսանողական հարցումների արդյունքների քննարկման և կիրարկման գործուն մեխանիզմների ներդրմանը, յուրաքանչյուր կիսամյակ Համալսարանում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների (ուսուցմանն առնչվող տարբեր տեսանկյուններից բավարարվածության գնահատում), ինչպես նաև յուրաքանչյուր տարի՝ Համալսարանում ուսումնառության վերաբերյալ շրջանավարտների հարցումների իրականացմանը, նշված հարցումներում ներառում է նաև կոռուպցիոն երևույթների վերաբերյալ համապատասխան հարցեր: Ուսանողների և շրջանավարտների շրջանում իրականացվող հարցումների ժամանակ հարցվողներին առաջարկում է պատասխանելու տվյալ քննաշրջանում դրամական կամ այլ նյութական միջոցների կամ ծառայությունների դիմաց, ինչպես նաև որևէ միջնորդի աջակցությամբ գնահատական կամ ստուգարք ստանալու վերաբերյալ հարցերին:

18. Հանձնաժողովը մշտադիտարկում է ուսանողների տեղափոխությունների և փոխանակումների ընթացակարգերի բարելավումը, Կառավարության կողմից հաստատված բուհերում սովորողների ակադեմիական շարժունակության կարգով խնդրի կանոնակարգումը, համալսարանից ուսանողների հեռացումների նկատմամբ վերահսկողության ուժեղացումը, ՀՀ Կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից հաստատված ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգով այս խնդրի կանոնակարգումը **(Փոփ. կատ. են 26.02.2025թ., N1-02/25/1)**:

19. Հանձնաժողովը խթանում է հանրային կապերի, Համալսարանին վերաբերող տեղեկատվության մատչելիության և թափանցիկության ապահովման ուղղությամբ տարվող հետևողական աշխատանքներին, Համալսարանի հանրային կապերի վերաբերյալ հայեցակարգի մշակմանը և հաստատելու համար Համալսարանի գիտխորհրդին ներկայացմանը, Համալսարանի հանրային կապերի ոլորտում իրականացվող աշխատանքների արդի վիճակի մասին գիտխորհրդին զեկույցի ներկայացմանը:

20. Հանձնաժողովը հետևում է ներհամալսարանական կյանքը կանոնակարգող փաստաթղթերի (կարգեր, կանոնակարգեր և այլն) մատչելիության ապահովմանը, Համալսարանի փաստաթղթերի կայքէջում Համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի, ֆակուլտետային խորհուրդների և գիտխորհուրդների որոշումների ու արձանագրությունների, ռեկտորի հրամանների, հաշվետվությունների ու գնումների ընթացակարգերի զետեղմանը, ինչպես նաև կրթական գործընթացը կանոնակարգող կարգերի և այլ փաստաթղթերի կայքի և Համալսարանի ինտերնետային պորտալի ստեղծման աշխատանքներին:

21. Խրախուսում է Համալսարանի կայքի միջոցով տեղեկատվության տրամադրման՝ առցանց հետադարձ կապի աշխատանքը, բոլոր անձանց առցանց հարց տալու հնարավորության ընձեռումը (կայքում գործող «Հարց-պատասխան» բաժնի միջոցով տարբեր ստորաբաժանումների օգնությամբ հնարավորինս սեղմ ժամկետներում սպառիչ պատասխաններ տալը):

22. Հանձնաժողովը մշտադիտարկում է Համալսարանում կադրերի ընտրության, նշանակման, պաշտոնեական առաջխաղացման, ատեստավորման և աշխատանքային հարաբերությունների գործընթացի կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքները:

23. Հանձնաժողովն աջակցում է Համալսարանի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշվի և համապատասխան կատարողականի մասին հաշվետվությունների մշակման աշխատանքներին:

24. Հանձնաժողովն աշխատանքներ է տանում ուսանողական խորհրդի կարողությունների զարգացման և հակակոռուպցիոն աշխատանքներում ուսանողական կառույցների առավելագույն ներգրավվման ուղղությամբ:

25. Հանձնաժողովն իրականացնում է հակակոռուպցիոն միջոցառումների համալիր ծրագրի մշտադիտարկում և ապահովում ծրագրի շարունակականությունը:

26. Հանձնաժողովը պարբերաբար հրավիրում է նիստեր և վերլուծում հակակոռուպցիոն միջոցառումների համալիր ծրագրի իրականացման արդյունքները:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ն.Ա.Միքայելյան**

Գիտական քարտուղար՝ **Լ.Գ.Այդինյան**